

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խնկացի կարծիք.—ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարձրագոյն մանիֆէստ. Կայսր Ալեքսանդր III-ի վերջին թուականը. Հայոց մամուլի հարկաւորականի առիթով. Ձեկուցում Սեանի լճի մասին. Նամակ Շուշուց. Նամակ Օղեսայից. Նամակ Լաւուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջազգային սոցիալիստական պարլամենտ. Թիւրքաց հայերը. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նամակ Թիւրքիայից.

ԽՆԼԱՅԻ ԿԱՐԾԻՔ

Ամենայն հայոց կաթողիկոսը՝ վեհափառ Խորհման՝ երբ դեռ նոր մուտք գործեց Կովկաս, մի տեսակցութեան ժամանակ յայտնեց հետեւեալ վերին աստիճանի խնկացի և հիմնաւոր միտքը. «Ես չը պէտք է զբաղվեմ մանր-մունքի, երկրորդական գործերով. այդ տեսակ գործերը ես կը յանձնեմ սինոդին, եպիսկոպոսներին, և միաբանութեան: Ես պէտք է զբաղվեմ միայն լուրջ, ընդհանուր գործերով, և ուղղութիւն տալով»:

Մենք այդ միտքը համարում ենք խնկացի և հիմնաւոր ոչ թէ այն պատճառով, որ դա մի նոր ճշմարտութիւն է, որ աւետեց աշխարհին կաթողիկոսական դասակարգը, այլ այն պատճառով, որ իւրաքանչիւր վարչական բարձր պաշտօնեայի գործունէութեան մէջ, ուրիշ և կաթողիկոսական դասակարգի գործունէութեան մէջ, դա միակ ճանապարհ է, որ կարող է արդիւնաւետ լինել և գործերը կարգի բերել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Կ. Պոլիս, հոկտեմբերի 13-ին

«Մառաշ արժանի է վարձուց լուրց», և հետեւաբար Ալեքեան արժանի էր այն 3,500 զուրուշ ամսականին, որ անցած օր սուլթանը նշանակեց իր ծառային Բայց որքան չարաբուհեցա խեղճը, որքան անգամ կրկնել ու յիշել տուաւ իր երախտիքը շուքանեան փառապանք գահունս. ինքը, որ յանձն առած էր իր խիղճը խեղճել, դաւաճանել, սուլթանը խաբել անխաղաղութիւն խոստումներով՝ միայն և միմիայն հանգիստ ծերութիւն մը ապահովելու համար իրեն, հիմա, աւաղ, ստիպուած է ողորմութիւն խնդրելու իր նախկին տէրերէն, որոնք աչքին նշանակութիւն մը չունին այլ ևս շահութիւններ, ըստ այն գործիքին, որուն այսքան տարիներ հաւատարմութեամբ ծառայել կարծեց: «Ոչ ոք կարող է երկու տէրանց ծառայել, կամ զմին անարգել, կամ զմիւսն սիրել», երկուքն ալ սիրել ուղեց և երկուքն ալ անարգուեցաւ: Բայց ինչ կը կարծէր խեղճը, թէ այս օրին պիտի հասնէր. ապացոյց, որ իր միակ ապաստանը, Արմաշու վանքը, ուր կընար երբ և իցէ ինքն ապաստանի, պատրիարքական անմիջական իրաւասութեան ենթակայեց, վանքին վանահայրութիւնը Կ. Պոլսի պատրիարքին սեփականել տալով, և փոխ վանահայրութիւն մը հաստատելով, որ պիտի վարէր Արմաշու Գաբրիէլեան տեսչութիւնը: Ինքզինքը յաւիտենական պատրիարք մը կարծելով, Արմաշուն պէտք չէր տեսներ և արդէն կը պատրաստուէր տուն մը շինելու Մաքրի գիւղի մէջ...:

Պաշտօնական պատրիարքներու ամսավճար մը նշանակելը կախում է ընդհանրապէս կառավարութեան բարեհաճ կամքէն: Այսպէս 5,000 զուրուշ ամսական թոշակ մը տրուեցաւ Պոզոս պատրիարքին, որ հակառակ մեծ եպարքոս Ալի-

Եթէ մի բարձրագոյն պաշտօնեայ, մի եկեղեցու կամ նոյն իսկ մի երկրի պետը, կը սկսի զբաղվել պատահական դէպքերով, կը սկսի օրեր, շաբաթներ գործ դնել մի որ և է պատահական խընդիր լուծելու համար, այն ժամանակ բարձրագոյն պաշտօնեան ամբողջապէս կուրկերթայ ընթացիկ, պատահական, աննշան դէպքերի մէջ, և ոչ ժամանակ, ոչ էլ միջոց կունենայ զբաղվելու աւելի կարեւոր, աւելի ընդհանուր, աւելի կենսական հարցերով, որոնց լուծումը երբեք չէ կարող պատկանել որ և է ստորագրեալին, որ և է երկրորդական պաշտօնեային:

Բերնէր մի շոշափելի օրինակ: Երեւակայեցէք, որ հայոց եկեղեցին բոլորովին չունենար ամուսնական որոշ օրէնքներ, որոշ սիւստմ, որով պարտաւոր լինէր զեկազարվել իւրաքանչիւր առաջնորդ, վարդապետ կամ քահանայ. և ամեն անգամ երբ մի ամուսնական կնիք տրոջ պատահէր, ամենքը ստիպված լինէին զիմէ կաթողիկոսին, իբր եկեղեցու գլխաւորին, որպէս զի նա ինքը անձամբ քննէր հարցը, անձամբ հարց ու փորձ անէր, և անձամբ վճիռ կայացնէր: Այն ժամանակ, անկապաճ, հայոց կաթողիկոսը, եթէ միշտ անգամ ուրիշ գործեր չունենար, բացի ամուսնական խնդիրներէն, և եթէ զիշեր ցերեկ զբաղվէր, այնու ամենայնիւ անկարող կը լինէր լուծել այն բոլոր ամուսնական խնդիրները, որոնք պատահում են և կարող են պատահել 5 միլիոն ժողովրդի մէջ:

Ելի մի ուրիշ օրինակ: Երեւակայեցէք, որ մեր ծխական թիմական դպրոցները ոչ մի

կանոնադրութիւն չունենային, որով պարտաւոր լինէին զեկազարվել թեմական առաջնորդները և հոգաբարձութիւնները. և ամեն անգամ երբ մի թիւրիմացութիւն պատահէր, կամ ուսուցչի ռոճկի, կամ աշակերտ արձակելու, կամ տեսուչ ընտրելու վերաբերմամբ, էլի հարցը հասնէր հայոց կաթողիկոսին, և նա ստիպված լինէր անձամբ քննել, ստուգել ամեն մի այգալիսի մանր-մունք խնդիր և վճիռներ տար, հաւատացնում ենք, եթէ օրը բաղկացած լինէր ոչ թէ 24 ժամից, այլ հինգ անգամ աւելի ժամերից, կաթողիկոսը էլի անկարող կը լինէր լուծել և ընթացք տալ հարկաւոր դպրոցական խնդիրներին, որոնք նրա առաջը կը թափվէին իւրաքանչիւր օր, զանազան կողմերից:

Եւ եթէ որ և է դպրոց, որ և է կոնսիստորիա, որ և է թեմական առաջնորդ, փոխանակ գոյութիւն ունեցող կանոնադրութիւններով զեկազարվելու, կը փորձեն, կամ նոյն իսկ կը ձգտեն ամեն մի մանր, մունք հարց, ամեն մի աննշան խնդիր հասցնել վեհաբան և ստիպել, որ ինքը կաթողիկոսը զբաղվի այդ աննշան հարցերով, այն ժամանակ եկեղեցու պետը, ստիպված լինելով իր ամբողջ ուշքը և միտքը նուիրել այդ աննշան հարցերին, անկարող կը լինի զբաղվել լուրջ խնդիրներով, ժամանակ էլ չի ունենայ մտածելու աւելի կարեւոր հարցերի մասին, ստիպված լինելով զբաղվելու այնպիսի գործերով, որոնք պատահում են մի եպիսկոպոսի, մի հոգաբարձութեան, կամ մի կոնսիստորիայի կոմպետենցիային:

Երբն է: Գաղական-կրօնական գործոց նախարարին անմիջական իրաւասութեան տակ գտնվելով, ալ կարելի է երեւակայել, թէ ինչ հոգի պիտի մտցնէ իր գործունէութեան մէջ: Ինչպէս կընայ հակառակել, չանսալ իր մեծաւորներու խօսքին. հապա 50 ոսկին, այսօր որ վունդն, ինչով պիտի ապրէ խեղճը: Կանքի պայքարին վարդապետութեամբ Եւսուֆեանն ալ կարգաբանայ, ինչպէս շատ անգամ ալ արդարացած է անցեալին մէջ: (Բայց այդ մասին ուրիշ անգամ): Եւ ահա Եւսուֆեանի խորհրդով կընտրեն Հմայեակը տեղապահ, այսինքն մարդ մը, որ կոչուած էր գործիքին ալ գործիքն ըլլալու:

Ինչպէս կը սկսեն իրենց գործը. նախ ժողովրդին մէջ սուտ լուրեր տարածելով իբր թէ բանտարկողները պիտի ազատվին, Ազգային ժողովը պիտի գումարով, պատրիարք պիտի ընտրվի չառաքել, վերապէս հազար ու մէկ շնորհներ, այսինքն, մեր լեզուով ոչ թէ շնորհներ, այլ մեր վաղեմի եկեղեցական և քաղաքային իրաւունքներու իրաւորութիւնը: Միւս կողմէն դատական-կրօնական գործոց նախարարութեան հետ բանակցութեան (sic) կը մտնան փոխադարձ զինգուծիւններ ընելու համար սահմանադրութեան quasi գործածութեան մէջ, մոռանալով, որ նախ ոչ Հմայեակը, որ տեղապահ մըն է լոկ, և ոչ քաղաքական ժողովը, որ միայն գործադիր իշխանութիւն մըն է, ան ալ շատոնց իրաւասութեան ժամանակն անցած, իրաւունք չունին այգալիսի առաջարկներ լսելու կամ անոնց մասին կարծիք յայտնելու. այլ մէկ իրաւունք և մէկ պարտականութիւն ունին, ըսելու թէ իրենց ձեռնհասութեան սահմանն ոչ միայն բարձր, այլ յանձնաւոր բարձր է ժողովրդի իրաւունքներ ծախելու:

Պատրիարքաւորներ վերջապէս կը գտնայ Ամբիկան, կը խնդրէ դատական նախարարութիւնէն, որ Ազգային ժողովի գումարումը հրամայող թեգքերէն մէջ գրուի «գումարել, ինչպէս յոյները կընեն, ժողով մը և քուէներու առաւելութեամբ ընտրել» և այլն: Բայց խնդիրն հոն է, որ ան-

Գա մի չարիք կը լինէր: Եւ տարաբաղաբար այդ չարիքն են առաջացնում մեր եկեղեցական—գործական վարչութիւնների տեղական օրգանները, որոնք փոխանակ կանոնադրութեամբ զեկազարվելու, և կամ փոխանակ կաթողիկոսից կանոններ խնդրելու, զբաղեցնում են նրան պատահական, աննշան դէպքերով և թիւրիմացութիւններով...:

Անարգարութիւն և նոյն իսկ անմոռութիւն է ստիպել հայոց եկեղեցու գլխաւորին՝ զբաղվելու այնպիսի հարցերով, թէ արդեօք այս ինչ դպրոցի տեսուչը սա պէտք է լինի, թէ նա, կամ արդեօք որ և է աշակերտին պէտք է արձակել թէ ոչ, կամ արդեօք սրան պէտք է ուսուցիչ հրաւիրել, թէ նրան:

Կաթողիկոսական բարձր պարտաւորութիւնը ահա թէ ինչ է.—հօսել, որ գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը չը խախտվի, որ ոչ ոք չը շեղվի եկեղեցու պետից տուած կանոնից,—և կամ եթէ չը կրն օրոշ կանոններ, և կամ եղածը թիւրի է և չէ համապատասխանում կեանքի պահանջներին,—փոխել, լրացնել կամ ստեղծել նոր կանոնադրութիւն:

Բայց եթէ, կրկնում ենք, տեղական օրգանները, մի առաջնորդ, մի հոգաբարձութիւն, մի վանահայր, կամ մի յաջորդ, կը ստիպեն եկեղեցու պետին, սիւստմի հարցը թողած՝ զբաղվել մանր-մունքի, տեղական աննշան խնդիրներով, և կամ եթէ ինքը, եկեղեցու պետը, փոխանակ սիւստմի մշակելու և որոշ կանոններ ստուգել, իր ամբողջ ժամանակը ստիպված կը լինի գործ դնել այգալիսի

հոն զանազանութիւն կայ մեր և յունաց իրաւունքներու մէջ: Յունաց պատրիարքն ընտրելու համար գաւառներէն, իրաւ է, որ կուզան պատգամաւորներ և միանալով քաղաքական ու կրօնական ժողովներուն՝ երեք անուն կընտրեն ցանկէ մը, որ նախապէս արքայազն է Բ. Գրան մէջ: Անկէ ետքը ալ երեքն մէկը կընտրեն սինոդը: Մինչ մըր սրբազնութեան ցանկ չի ճանչցար և միանգամայն կընտրուի աշխարհական երեսխոխաններու մեծապատիւութեամբ: Բայց ատկէ զատ, անոնց, յունաց, պատգամաւորներն պատրիարքի ընտրութիւնը կատարելէն ետքը ուրիշ գործ չունին ընելու, կը ցրուին, կըրթան: Մինչ մըր Ազգային ժողովը ճշմարտապէս վարիչ բարձրագոյն իշխանութիւնն է, ժողովներն ընտրող, անոնցմէ հաշիւ պահանջող, անոնց ձեռնհասութիւն բարձր եղող խնդիրները լուծող. կը բաւէ յիշել, որ առաջ զերթէ ամեն ուրբաթ Ազգային ժողովը կը գումարվէր: Ահա թէ ինչ փոխանակութիւն կառաջարկել Հմայեակ այնպիսի միջոցին, երբ յունական մամուլը, Կ. Պոլսի և թէ Աթէնքի հիացումով կը խօսէր մեր վարչական սկզբունքներու մասին հայագէտ Չօլաքիզէսի ազգային սահմանադրութեան յունարէն թարգմանութեան առթիւ:

Բայց զանք մեր խնդիրն երեկ վերջապէս այդքան երկար սպասուած թեգքերէն կուգայ. մէջը պարզապէս գրուած է. «Ժողով գումարեցէք և պատրիարք ընտրեցէք», ո՛չ «ինչպէս յոյները կընեն» և ոչ ալ «բուհարկութիւն» բառերը կան: Հմայեակին ցաւը կը բռնէ. և իսկոյն կը դիմէ նախարարութեան բացատրութիւն խնդրելու: Ողորմելի մարդ, կարծես մեծ տարբերութիւն կայ իր առաջարկածին և անոնց ըսածին միջև: Երկուքն ալ իրարմէ գէշ: Իսկ Պատրիարքաւորն էն լուրեր կը հասնեն, թէ ազգին իրաւունքները պաշտպանելու կը ջանայ, և անոր համար նախարարին դիմեց...:

աննշան խնդիրները վրայ—այն ժամանակ գործերը ոչ թէ միայն առաջ չեն գնաց, այլ միանգամայն կանգ կառնեն։

Ահա թէ ինչու մենք խնայելի և հիմնաւոր համարեցինք վեհապետի այն խօսքերը, թէ «Ինքը չը պէտք է զբաղվի մանր մանր, երկրորդական գործերով, այլ միայն լուրջ, ընդհանուր, կարեւոր գործերով և ուղղութիւն տալով»։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԷՍՏ
(Հեռագիր հոկտեմբ. 21-ին)

Այսօր կատարվեց Մեր Հարսնացուի սուրբ օծումը, ընդունելով Ալեքսանդրա անունը։ Նա դարձաւ մեր ուղղափառ եկեղեցու դուստր ի մեծ մխիթարութիւն Մեր և ամբողջ Ռուսաստանի, սգալի փորձութեան միջոցին, որ մեզ բոլորին ուղարկված է Ամենաբարձրեակալ անհասանելի կամքով։ Հաւատում ենք մեր ամբողջ ժողովրդի հետ միասին, որ Մեր սիրեցեալ Ծնողի հոգին երկնային բնակավայրերում օրհնեց Նրա և Մեր սրտի ընտրածին՝ բաժանել Մեզ հետ հաւատացող և սիրող հոգով Մեր հայրենիքի բարօրութեան և առաջադիմութեան վերաբերեալ անդուլ հոգսերը։ Մեր բոլոր հաւատարիմ հպատակները կը միանան Մեզ հետ իրանց աղօթքի մէջ։ Թող ուղարկի Աստուած իր օրհնութիւնը Մեզ և Նրա կամքով Մեզ յանձնված ժողովրդի վիճակի վրայ։

Տեղեկացնելով Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին սոյն ցանկալի անցքի մասին, հրամայում ենք Մեր Բարձր Հարսնացունին՝ Նորին Մեծ դրսական Բարձրութիւն պրինցուհի Ալիսային անուանել Բարեպաշտ Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնա, կայսերական Բարձրութիւն տիտղոսով։

ԿԱՅՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ III-ի ՎԵՐՋԻՆ ԲՈՊԵՆԵՐԸ
(Պաշտօնական հեռագիր)

«Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի վախճանը անարատ էր, որպէս անարատ էր Նրա կեանքը, ի ի հաւատով, սիրով և հեղութեամբ։

«Մի քանի օր նա զգում էր մօտալուտ մահը և պատրաստուում էր նրան, որպէս հաւատացեալ քրիստոնեայ, չը թողնելով կառավարչական գործերին վերաբերեալ հոգսերը։ Երբու անգամ, հոկտեմբերի 9-ին և 17-ին, թագաւորը ս. Հաղորդութիւն ընդունեց։ Չը քնելով ամբողջ գիշերը, վաղ առաւօտեան, հոկտեմբերի 20-ին, ի Տէր հանգուցեալ կայսրը ասաց կայսրուհուն. «Զգում եմ վախճանը, հանգիստ եղիր, եւ կատարելապէս հանգիստ եմ և իր շուրջը ժողովելով իր ամբողջ ընտանիքը, հրաւիրեց խոստովանածօրը և հաղորդվեց մեծ հաւատով, բոլորի համար պարզ և լսելի ձայնով աղօթք աւելով հաղորդվելուց առաջ, բաղնիքում մէջ նստած։

«Թագաւորը ամբողջ ժամանակ ոչ մի բան էր անկողնութեան չը կորցրեց։ Պատարագից յետոյ նա կանչել տուեց հայր Եփանիմ և նրա հետ միասին աղօթում էր. ապա կէս ժամից յետոյ, կրկին մօտ կանչեց նրան և հայր Եփանիմը նորից աղօթք կարգեց և օծեց Նրան ս. մեռնումով, հաղորդեց և մնաց Նրա մօտ մինչև վերջին րօպէն։

«Վէսօրեց յետոյ 2 ժամին թագաւորի դարկերակը զօրեղացաւ և Նրա հայեացքը կարծես թէ աշխոյժ ստացաւ, բայց քառորդ ժամից յետոյ, փակելով աչքերը և յետ գցելով գլուխը, Նա հոգին տուեց Ամենաբարձրեակալ Աստուծուն, կտակելով իր ժողովրդին աշխարհի օրհնութիւնը և բարի կեանքի պատկերանք։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՐԻՐԱՄԵՆԱԿԻ ԱՌԻԹՈՎ
«Պետերբուրգի և Մոսկովայի ռուս լրագիրները հայ մամուլի հարկարմանակ առիթով տպագրել են յօդուածներ, որոնց մէջ աչքի է ընկնում Իւրի Վէսեյովսկու յօդուածը, որ ապկած է «Русская Бѣдомості» լրագրի № 286-ի մէջ։

Խոսելով առաջին հայ լրագրի՝ «Աղբարարի» մասին, բացատրելով այն մեծ նշանակութիւնը, որ ունեցել են հայ գաղթականութիւնները հայ ժողովրդի մտաւոր զարգացման համար, շեշտելով այն աննպատ հանգամանքները, որոնց մէջ հայ մամուլը ստիպված է եղել գործել և ցոյց տալով, որ այդ մամուլը դեռ այսօր ևս չէ կարողանում նիւթապէս ապահովացնել հայ գրողներին, վեր-

ջապէս մի ընդհանուր ակնարկ գցելով հայ մամուլի պատմութեան վրա, երկտասարդ յօդուածագիրը, որի անունը արդէն անյայտ է, մեր հասարակութեանը, իր խօսքերը վերջացնում է հետեւեալ տողերով, որ ամբողջապէս առաջ ենք բերում։

«Հայ մամուլի պատմութեան մէջ, մանաւանդ վերջին 50 տարւոյ ընթացքում, պատահում են բաւական համակրելի և նշանաւոր անուններ։ Յիշե՛ք աշտուղ, օրինակի համար, պրոֆէսոր Նազարեանցին, որն իր օրգանի մէջ տոկունութեամբ առաջ էր մղում կուլտուրական դադաւիւնները և պաշտպանում էր աշխարհաբար հայ լեզուն, որ յարմարեցրած է ժամանակակից պահանջներին. յիշե՛ք նրա վաղաժամ մեռած աշխատակցին և օգնականին, առաջադէմ, եւրօպական կրթութիւն ունեցող հրապարակախօս Մ. Նալբանդեանին. յիշե՛ք Պարոնեանին, որ այնքան տաղանդաւոր կերպով ծաղրում և մտրակում էր երկրապահական հրատարակութիւնների մէջ իր հայրենակիցների պակասութիւնները. յիշե՛ք յայտնի հրապարակախօս Գրիգոր Արծրունուն, որ ամբողջ քսան տարի հրատարակեց «Մշակ» լրագիրը և ձեռք բերեց ժողովրդականութիւն ու միայն հայ հասարակութեան մէջ, այլ և ռուս մամուլի յարգանքը. յիշե՛ք այժմեան կաթողիկոս Խրիստեանին, որ 50-ական թւականներին վերջերքին փորձեց հրատարակել թիւրքաց Հայաստանի կենտրոնում մի լրագիր բուն ժողովրդական լեզուով, «Արծիւ Վասպուրականի» անունով և այլն։

«Եթէ մի քանի հայ լրագիրներ և ամսագիրներ էջերում քարոզել են երբեմն լեւոնդիստական, յետադէմ մտքեր, դրա փոխարէն, միւս օրգանները, շնորհիւ այն բանի, որ յիշեալ անձանց նման գործողներ աշխատել են դանաղան ժամանակներ մայրենի մամուլի օգտին,—հնարաւորութիւն են ունեցել աւելի պատուաւոր դիրք ստեղծել և որոշ կուլտուրական աղիցեութիւն ունենալ մտքերի վրա, նպաստելով եւրօպական լուսաւորութեան տարածման ժողովրդի մէջ։ Դրա մէջն է կայանում հայ մամուլի ամենալաւ և ամենաառաջադէմ մասի զլխաւոր պատմական արժանաւորութիւնը։ Աւելացնե՛ք, որ ամենանշանաւոր հայ բնկէտիստների շատ աշխատութիւնները տպագրվել են առաջ լրագիրներում և ամսագիրներում, որոնք այդպիսով կարեւոր դեր են խաղացել, ծանօթացնելով հասարակութիւնը այս կամ այն վիպագրողի ստեղծագործութեան հետ։

«Հայ լրագիրը հետզհետէ աւելի և աւելի էր մօտենում ժողովրդի իրական կեանքին. հին, դրաբար լեզուից նա թիչ թիչ անցաւ նոր գրականական բարեւոններին. նորութիւններ և լուրերի ժողովածուից (առաջին հրատարակութիւնները այդ բնաւորութիւնն էին կրում) դարձաւ հասարակական կեանքի ղեկավարը։ Եւ օրքան մամուլը աւելի էր մօտենում կեանքին, այնքան շատ նա կարողանում էր ձեռք բերել ժողովրդի օէրը և համակրութիւնը, որ արտայայտվեց, օրինակ, այնքան որոշ կերպով նախ Արծրունու յօդուածին, իսկ ապա նրա հանդիսաւոր թաղման ժամանակ։ Ժողովրդականութիւն վայելող այդ հրապարակախօսի տօնախմբութիւնը, անկասկած, մի նշանաւոր և ուրախալի իրողութիւն է, թէ ևս դրա հետ միասին չը պէտք է մոռանալ, որ մի թիչ դրանից առաջ, մի ուրիշ հայ կենտրոնում մեռաւ օյժիկի սպառնումից թշուառ Պարոնեանը...»

«Ի վերջոյ, պէտք է մատնացոյց անենք նորագոյն հայ մամուլի ամենահամակրելի յատկութեան վրա,—այդ այն ընդունակութիւնն է, որով նա արձագանք է տալիս ժողովրդի շահերին և կարիքներին։ Հասարակական աղէտների ժամանակ, օրինակ, Հայաստանում տիրող սաստիկ սովի ժամանակ, 1879 և ներկայ 1894 թւին, շատ լրագիրներ յաճախ կարեւոր ծառայութիւն են մատուցել, հրաւիրելով հասարակութեան ուշադրութիւնը սովեալների վրա, յորդոր կարողաւոր նուէրներ անելու և ժողովելով երբեմն տասնեակ հազար լուրիկներ Այդ ընդունակութիւնը՝ օրվայ խնդիրներով զբաղվելու, շատ գործերի և հրապարակախօսների եւանդուն գործունեութեան հետ միասին, հետաքրքիր են դարձնում հայ մամուլի հարկարման յօդուածները նոյն իսկ կողմնակի դիտողի համար։»

ԶԵԿՈՑՈՒՄ ՍԵՆԱՆԱՑ ԼՃԻ ՄԱՍԻՆ

Ռուսաց Աշխարհաբարական ընկերութեան օգնականական մասնաժողովի նիստում, ինչպէս

հաղորդում է «Русская Жизнь» լրագիրը, հոկտեմբերի 14-ին Ս. Ս. Մարկով մի հետաքրքրական զեկուցում արաւ Գեօկչայ, կամ Սեանի լճի մասին, Անդրկովկասում, ուր ուղարկված էր՝ հարաւային Ռուսաստանի ուղղման էկսպէդիցիայի կողմից։

«Էկսպէդիցիան մտադիր է լաւացնել Երեւանի դաւառի ուղղումը (որտեղ ի միջի այլոց աճում է պատահական բամբակ), ջուրն առնելով Զանգի գետից, որ սկիզբ է առնում Գեօկչայ լճից։ Այս ամառ սկսված են հետազոտութիւններ, որոնք ցոյց պէտք է տան, թէ լճի մակերդով ի՞նչու է թէ ոչ լիճը շատ մեծ է—մինչև 1220 քառ. վերստ, բայց խորութիւնը այնքան մեծ չէ. արեւմտեան, փոքրագոյն մասում նա հասնում է 40 սաժէնի, իսկ մեծագոյն մասում՝ 30 սաժէնի։ Արեւմտեան մասում, 25—30 սաժէն և աւելի խոր, ջրի մշտական բարեխառնութիւնն եղել է Յեթիտաի 40 (ամենամեծ խտութեան բարեխառնութիւնը), իսկ ջրի մակերեսով յաճախ եղել է 200 և աւելի բարձր։

Չը նայելով որ լիճը շատ բարձր է ծովի մակերեսից (6300 ոտնաչափ) և ձմեռն այնտեղ սաստիկ ցրտեր են լինում՝ լիճը այնու ամենայնիւ չէ սառչում, բացի մի փոքր տարածութիւնից եղբներում Զմեռը լիճը շարունակ պատած է լինում մառախուղով։ Լճի եզերքները համարեալ դուրի են բուսականութիւնից, իսկ արեւմտեան և հարաւային ափերը հարստային կաղաւթիւն ունեն։

Եւրոպիկա դիւղում հիմնված է օդերկառանակաւ կայարան, որտեղ չափւում է լճի մակերեսով թափարկութիւնը և ջրի գոլորշիացումը ջրի մակերեսովից։ Լիճը ձկնորով շատ առատ է։»

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 18-ին Ձեզ յայտնի է արդէն, որ Վեհափառ քննելով թեմական դպրոցի հոգաբարձութեան ընդհանրական հրամայեց հոգաբարձութեան և տեսչին վարել գործերը և պաշտօնը՝ դպրոցի կանոնադրութեան համաձայն։ Հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը կամենալով միանգամ ընդ միշտ հաստատել դպրոցի մէջ կարգ և լաւադրութիւն և ապագայ յուղմունքների առաջն առնել, միաձայն որոշում են հեռացնել դպրոցից 7 աշակերտներ, որոնք ամեն տեսակ անկարգութիւն, խռովութիւն էին յարուցանում դպրոցում և իրանց վարք ու բարքով շատ միատեսակ արդեցութիւն կարող էին ունենալ դպրոցի 475 աշակերտների վրայ։

Սակայն հոգաբարձութեան նախագահ Ալլադեան եպիսկոպոսը, պաշտպան հանդիսանալով այդ արձակված աշակերտներին, ղիմում է Էջմիածին և այնտեղից ստանում հրաման՝ ընդունել 7 աշակերտներին։ Խոր համոզված լինելով, որ այդ աշակերտներին ընդունելը մեծամեծ անկարգութիւնների պատճառ պէտք է լինի, հոգաբարձութիւնը—որը իր կողմից ամեն նշան և միջոց գործ էր դրել զղջման բերելու այդ աշակերտներին և մտադիր էր ընդունել, եթէ միայն նրանք զղջման օր և է նշան ցոյց տային, բայց չէր աջողել իր ձեռնարկութեան մէջ,—սեպտեմբերի 16-ին դիմում է հեռագրով Վեհափառին և մանրամասն բացատրում այն բոլոր պատճառները, որոնց հիման վրա անկարելի է համարում 7 աշակերտներին նորից ընդունել։

Մի և նոյն ժամանակ հոգաբարձութիւնը յայտնում է, որ եթէ իր միջնորդութիւնը չարժանանայ Վեհափառի ուշադրութեան, նա ստիպված կը լինի հրաժարվել իր պաշտօնից՝ ապագայում ծագելի չարիքների պատասխանատուութիւնից իրան ազատ պահելու համար։

Այդ հեռագրի հետ միասին հոգաբարձութիւնը ուղարկում է և մանկավարժական ժողովի պատճառաբանեալ որոշումի պատճէնը։

Հոկտեմբերի 8-ին խորէն եպիսկոպոսից ստացվում է հեռագիր, թէ Վեհափառը հրամայում է յետաձգել իր հրամանի կատարումը մինչև նոր հրահանգ տանալը։

Իսկ հոկտեմբերի 14-ին ստացվում է նոր հեռագիր, թէ պէտք է ընդունել արձակված աշակերտներին։

Իրերի այս դրութեան մէջ հոգաբարձութեան և ուսուցչական խմբին մնում էր միայն կատարել կաթողիկոսական հրամանը և ապա հրաժարական տալ։ Այսպէս էլ արին նրանք։

Ծնողներից շատերը խնդրեց ուղարկեցին Էջմիածին,

ծին, Վեհափառին, որի մէջ յայտնում են, որ չեն կարող համաձայնել, որ իրանց որդիքը դպրոց գնան, եթէ ընդունվին վարքի պատճառով արձակված աշակերտները։

Հոգաբարձութեան բոլոր անդամները հրաժարական տալով (բացի մէկից՝ Զ. Իշխանեան) խնդրել են Վեհափառից՝ անմիջապէս նոր ընտրութիւն նշանակել, որպէս զի իրանք գործիք յանձնեն նոր հոգաբարձութեան։

Էջմիածնում, ստանալով ուսուցչական խմբի և հոգաբարձութեան հրաժարականը, անմիջապէս Ալլադեան և եպիսկոպոսին կանչում են Էջմիածին։ Եպիսկոպոսը հեռագրով պատասխանեց, որ չէ կարող գնալ տկարութեան պատճառով։

Հ.

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 15-ին

Այստեղ օրվայ չարիքը «Վաղիմիր» շոգեհատի խորտակման գործի քննութիւնն է։ Այսօր այդ քննութեան 15-րդ օրն է, և դուցէ 15 օրից էլ աւելի կը շարունակվի, որովհետեւ վիաների մեծ մասին դեռ չեն հարցրել. այսօր հարցրին 55-օրը վկային։

Դատարանը, ամեն օր բաց անելով նոր հանգամանքներ, արագիւղով լի նոր մանրամասնութիւններ, մարդկանց անդձուլթեան, տմարդութեան, յանցանքներ անտարբերութեան նոր ապացոյցներ, թարմացնում է Օղէտայի հատարակութեան՝ երեք ամիս առաջ թշուառ դոհերի այլ լանդակված դիակների տեղից ստացած սարսափելի տպագրութիւնները։ Օղէտան կանգնել է այդ գործով։ Այդ պրոցեսը տպող տեղական լրագիրները այժմ սովորականից 6—7 հազար օրինակ աւելի են բաց թողնում։

Հետաքրքիր է այն մեծ փոփոխութիւնը, որ կատարվեց մտքերի մէջ այդ գործի վերաբերմամբ։ Վննութիւնը սկսելուց առաջ բոլորը այստեղ, ինչպէս և ամբողջ Ռուսաստանում, հաւատացած էին, որ իտալացիները մեղաւոր են, որ ներքին հրէշներ են, որ նրանք չէին ազատում խեղդվողներին, չէին ընդունում աղատվածներին և այլն,—և այդ բոլորը «ռուսական նաւանցացութեան ու առեւտրի ընկերութեան» գործակալների տարածած լուրերի ու նրանցից վարձված գրչակաների շնորհիւ։

Բայց այժմ տեսաբանը փոխվում է. բանից դուրս է գալիս, որ Սև ծովի վրա կատարված այդ սարսափելի ողբերգութեան մասնակցողները, «Սինեուսի» նաւաստիներն էլ հետը, ամեն նամարդաւէրը ու աղիւր էլի եղել են իտալացի նաւաստիները։ Նրանց կարելի է մեղադրել սխալների համար, բայց վախկոտութեան, տմարդութեան համար,—երբէք։ Թէ և վիաներից շատերը մնում են առանց հարցնելու, բայց հարցրվածներ իր բացատրութիւններից էլ կարելի է ճիշդ եզրակացութիւններ անել այն մասին, թէ ով է մեղաւորը այդ կատաստրոֆայի մէջ, թէ ինչպիսի կարգեր, աւելի ճիշդ՝ ինչպիսի անկարգութիւններ են տիրում այդ նաւադնացութեան ընկերութեան մէջ, թէ ինչ դեր են կատարել կատաստրոֆայի ժամանակ նաւապետը՝ Կրիստը իր օգնականներով ու նաւաստիները, թէ ինչու այդքան տահալ է եղել դոհերի թիւը...

Դրա համար մի կողմ պէտք է թողնել շահ ունեցող, հետաքրքրված կողմերի՝ նաւաստիների կանխօրէն պատրաստած, բայց էլի շատ անգամ հակասական պատասխանները։ Դրանց մասին ինքը կապիտան Կրիստը հաստատում է, որ փողոցից հաւաքածներ են։ Պէտք է դիմել այնպիսի անաչառ, ինտելիգենտ, բարձր կանգնած պատասխաններին, ինչպէս են—տիկին Զիգոմալայ, յուրաքանչեւ Կրիստի պալատականը, Նալուայի իսպրանիկ Գրէկովը, վաճառական Զեքսօբորիլը, շտաբ-կապիտան Գրուշանինը, տիկին Կանայրովան, տիկին Կայը և Գրիգորովին, որոնք ապացուցանում են.—«Վաղիմիր» նաւապետի անգործութեան ժամանակ շտաբ-կապիտան Կրիստի վախկոտութեան չափը, որ մօտ չը դան նաւակներին, որպէս զի իրանք առաջ աղատվին, և որ ամենագլխաւորն է՝ նաւի լուսամուտները բաց էին թողնել, որտեղից ջուրը լցվելով փութացրել

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 հոկտեմբերի: Հոկտեմբերի 20-ին, երեկոյան, Պետերբուրգի նահանգական արտադրութեան պարագայում տարբեր Նորին Կայսերական Մեծութեանը մի հեռադիր, որին թագաւորը հոկտեմբերի 22-ին պատասխանեց հետեւեալը. «Մեր անասելի վշտի մէջ թագուհի Կայսրուհին և իսկ միմեծութիւն ենք դանում այն գիտակցութեան մէջ, որ Մեր ստատիկի վշտին խորին կերպով մասնակցում է Մեր սրտին սիրելի ազնուականութիւնը: Ենթադրուի կալ իմ յայտնված հաւատարմի հպատակութեան զգացմունքների համար»:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 հոկտեմբերի: Հանդուցեալ Ալեքսանդր III Կայսրի աճիւնի համար զազաղը չինված է Պետերբուրգում չոր կաշնիքից, կրկնակ, ներսից պատած է պղնձով, իսկ դրսից կռածոյ սակեայ դիպակով, անկուածներով և պետական գերբով: Գազաղի կաշնիքի արտաքին յարդարանքը ամբողջապէս կռածոյ սակեայ դիպակից է և զարդարված է ոսկեայ ծոպերի հիւսուածքով: Բոլորները մէջ զետեղված են պետական գերբեր: Բոլորները պատած է ոսկեայ դիպակով: Զազաղի ծածկոցն էլ ոսկեայ դիպակից է, Կայսերական ծիրանիով և ծայրերին ձող ոսկի փունջերով և պետական գերբերով: Ենթադրուի համար բարձրը և պատանդանները պատած են ոսկեայ դիպակներով: Երէկ երեկոյ Նիկոլայեւսկի երկաթուղու արագ գնացքով զազաղը, դիպակը, բարձրը, ծածկոցը և պատանդաններն ուղարկված են Լիվադիա:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 հոկտեմբերի: Հանդուցեալ Կայսրի մարմնի մօտ հոգեհանդիտներ են կատարվում օրական երկու անգամ, անկողնա-կալի զլինի, որի վրա հանդուած է մարմինը, որ ու զիշեր քահանաները աւետարան են կարդում: Մարմինը եկեղեցի փոխադրելուց յետոյ, ազգաբնակչութեանը թող կը արվի մասնակցելի և երկրպագութիւն մատուցանել:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 դեկտեմբերի: Հոկտեմբերի 21-ին, Սոցիալական Հարսնացում օժան օրը, Ս. Հաղորդութիւն ընդունելի թագաւոր Կայսրը և թագուհի Կայսրուհին—թագաւոր Կայսրի պատասխան հեռագիրը արգարադատութեան մի-նիստերի ամենահպատակ զեկուցման, սենատի յայտնած հաւատարմի հպատակութեան զգաց-մունքների առիթով. «Կատարվողական սենատի կողմից ձեր ինձ յայտնած հաւատարմութեան հոգեմունքների մէջ հաւատարմութեան ինքնու-նիւ կատարվում գտնել նրա մէջ գործակցութիւնը՝ ծառայելու սիրելի հայրենիքին այն ճանապարհով, որ ցոյց է տուել իմ անմուսնալի ջանքերով—թագա-ւոր Կայսրի պատասխան հեռագիրը Պետերբուրգի միտրոպոլիտին. «Ի սրտէ չորսնակութիւն համ յայտնում սրբազան սինոդի անդամներին ինձ յայտնած զգացմունքների և ցաւակցութեան համար խորին վշտի քաղկին: Զերմ սիրով ներշնչված լինելով զէպի հանգուցեալ զնոյս, ես հետեւելով նրա օրինակին, կը նուիրեմ իմ ոյժերը ծառայելու սիրելի հայրենիքին և ուղղափառ եկեղե-ցուն»:

Լիվադիայի, 24 հոկտեմբերի: Երէկ Մօսկվայից և խորհուրդից հասան բոլորի—մասնագէտներ հան-դուցեալ Կայսրի մարմնը զմտելու համար:

ՄՕՍԿՎԱ, 24 հոկտեմբերի: Մօսկվայի լրագրե-րների խմբագիրները դրաւոր համաձայնութիւն տուին Պետերբուրգի լրագրիչների առաջարկու-թեանը՝ մայրաքաղաքների լրագրիչների սենդիկա-տի ձեռքով հեռագիրներ ստանալու և տարածե-լու մասին, առանց օտար ձեռնարկողների որ և է միջնորդութեան:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔԱՆԱՎԱՐՍԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
աշակերտների ընդունելութիւնը լինելու է նոյեմբերի 5-ին: (121) 3—3

«ՓԱՌՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
Հայոց թագաւորների պատկերներ, զինն է 10 հատը 6 րուրի: 1 հատը 1 րուրի:
«ՀՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
ուսանկար պատկերներ, չափն է 12 վեր-շօի, զինն է 10 հատը 15 րուրի, 5 հա-տը 8 րուրի, հանդերձ ճանապարհածախ-տով. կարելի է ստանալ նալոժին պլատինով:
Հասցէն. Москва, арм. перковь. И. Ге-чеву. (№ 118) 4—5

Питательный напиток
Чистый Какао Блокеръ
Պիտատէլ Նայթոք
Չիստիյ Կակաո Բլոքեր
Թաղը նստում է միայն 4 կօպ:
Բոլորական պարագայութիւն:
ՄԱԳՈՐԴԵՐ ՄՆԵՐԱՐԱՐ ՓՈՇԻ:
Առաջարկվում է առողջացողների և երեխաների համար:
Միակ պահանջ՝ Բարձրագոյն հաստատված դիպակովական արտադրիչների վա-
ճառանքն արգելադրում է անողջացողներին մէջ օրհնելու և բազումն:
Ն 120. 90 թ.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ	
Ժողովրդական ընկերացանութեան համար խմբա- գրված հետեւեալ գրքերը	
Վ. Ի. պ ա զ ր ա կ ա ն	
ԼԱՍԼ, Թիւրքաշայերի կենսաբան. Վ. Փ.	5 Կ.
ԱՅՍՏԵՂ ԵՒ ԱՅՆՏԵՂ, Գ. Արծրունու.	10 >
ԱՐՆԱԳԻՆ, Լ. Եօի.	7 >
ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՏԻԿԻՆ.	5 >
ԼԻՐ ԹԱԳԱՆՈՐ, ԸՍՏ ԵՆՏԱԿԻՐԻ.	5 >
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՅԻ, Թարգ. Խ. Մ.	5 >
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂ. ԲԱՏ	5 >
ԳԻՒՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱՆԱՐ	5 >
ԵՂԱՍՏԵՐ ԵՂԱՍՏ ԳԵՍ, Թարգ. Յ. Օ.	7 >
ԱՐՋԵՐԸ, Գարշինից, Թարգ. Խ. Մ.	5 >
Բ ն ա զ ր ա կ ա ն	
ՊՍՏԻԿ Ի, ԲԱՅՑ ՉՍԻԿ Ի, Լուսկիլիչե.	5 >
ԻՆՆ Ե ԿՍՑՄԱԿԸ	5 >
ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՂԻ.	6 >
ԱՐԵՎԱԿԻ ԵՒ ԼՈՒՄԵՆ ԽԱՄԱՐՈՒՄԸ.	5 >
Կ ն ա զ ր ա կ ա ն	
ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալուժանի.	50 >
ԽՐԻՄՍԵՆ.	40 >
Ա. ո. զ ա կ ա ն	
ԽՕԼԵՐԱ ԵՒ ՄԻՋՈՆԵՐ ԲԺ. Գ. Տ. Գ.	5 >
Օ Ր Ե Ն ա զ ր ա կ ա ն	
ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ	
Կովկասի համար կազմեց Խ. Մ.	30 >
Թիֆլիս:	
Խ. Մ ա լ ու ժ ա ն	

Ցանկացողները պէտք է իրանց երգերը, բանաստեղծութիւններն ու ոտանաւորները աշխատեն ուղարկելու, ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ազգային լիակատար երգարանի մէջ հրատարակելու համար, մինչև նոյեմբերի 15-ը ներկայ թւի, հետեւեալ հասցէով. Свящ. Григоріу Григоріанцѣ, Баку. (№ 116) 5—2

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍԶԻ ԿՈՂՄԻՑ
Սրանով տեղեկացնում եմ զի Կոնստանտին Զարու-
ցական վարչութիւններին, որ ամսիս 16 ից մեկ-
նելու եմ Թիֆլիսից զէպի թեմիս զանազան կող-
մերը այցելութիւն զարգացնելու Ուստի անհրա-
ժեշտ զէպեւում ինձ հետ դործ ունեցողները հե-
ռագրով կարող են դիմել ինձ մօտաւորապէս
մինչև ամսիս 22-ը՝ Ալաւալաւա, մինչև 29-ը՝
Ալաւալա, մինչև նոյեմբերի 3-ը՝ Արդուին,
մինչև 7-ը՝ Բալթուս, մինչև 11-ը՝ Փօթի, մին-
չև 15-ը՝ Բուսթալիս, մինչև 22-ը՝ Գօրի և
ապա Թիֆլիս:
Թեմական տեսուչ՝ Մ. Բ. Մեկան
(№ 120) 2—2

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թւին ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ—ԱՆՈՎԵՐԱԿԵՆԻ, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՌՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—ԼԻՈՆԻ ցու-
ցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

Ը Ն Տ Ի Ր Պ Ա Պ Ի Ր Օ Ս Ն Ե Ր

«Капризъ»	25 հատը 15 կօպ.
«Рекомендаціонныя»	10 հատը 5 կօպ.
«Театральныя»	10 հատը 3 կօպ.
«Флора»	
«Экономныя»	

Կարելի է առնել զործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ:
Ուղարկելու ծախսը զործարանի վրա է: (№ 104) 0—9

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՏԱՆՈՒԼԱՅԻ ՆԱՏԻՆԻ ՄԵՋ ՆՆԱՆԱԿ
ված է ԱՃՈՒՐԴ 31-ին սոյն հոկտեմբերին, առանց կրկնաձուրդի, վարձով տալու
համար էջմիածնապատկան եօայրի տունը 6-րդ քաղաքամասում և այգին Որթմա-
լայի:

Անգամ կոնստանտնուպոլիս համալսարանի վարդապետ
(№ 121) 2—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆ

Ը Ն Դ Ո Ւ Ն Ո Ւ Մ Ե Հ Ի Ի Ա Ն Դ Ն Ե Ր

Մանկարարական և կանանց հիւանդութիւններով:

Հասցէն՝ Նազորայա և Բարիլլիսկայա փողոցների անկիւն, № 13, տուն Շա-
խարովի: (№ 114) 5—5

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՐՕՍՄԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԹԵՐ 20,500,000 ՐՈՒՐԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Օրինակ: Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5,000 Ր., որ
պէտք է արվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ: Այդպիսի
ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 Ր. 80
կօպէկ:

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 Ր. գումար-
ների մէջ անձի կենսի համար:

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաննե-
րով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ
լինելու դէպքում:


Ապահովագրական գումարը արվում է և մահվան դէպքում տարախիսիկ հի-
ւանդութիւնից, խորխից և այլն:

Յունվարի 1-ին 1894 թւի «Բոսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին
28,246 անձինք 75,621,010 Րուբլի զբաղակալի:

Ապահովագրողները մասն առնեն ընկերութեան եկամուտներից:

Ապահովագրողների զիվիդենտը 1893 թւի համար—12% է:

Ապահովագրութեան համար այտարարութիւնները ընդունվում են և ամեն
տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Бол-
шая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում
(Сергиевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան
բոլոր քաղաքներում: (№ 85) 13—15



Ա. ԿՈՊՊԻ

ՖՕՐՏԵՊԻԱՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ

(Միջաշէկան փողոց, № 132)

Կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350
րուբլուց մինչև 450 Րուբլի արժողութեամբ:
(№ 119) 4—25